


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 112175 գործարքներ, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.3%-ով:


2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված



գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 45695 օտարման գործարքների 87.7% կազմել են առուվաճառքները, 11.6%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 37.6% արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 37.8%՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 17.7%-ով: 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 14529 առուվաճառքի գործարքների 63.9% արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.5%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

<i>Համայնքներ</i>	<i>Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվար-նոյեմբերին /դրամ/</i>	<i>Միջին գները /դրամ/</i>	
		<i>հունվար-նոյեմբեր 2005թ.</i>	<i>հունվար-նոյեմբեր 2006թ.</i>
Կենտրոն	178900-900000	284500	375300
Արաբկիր	114300-771000	232400	295900
Քանաքեռ-Զեյթուն	111100-362900	142200	182700
Նոր-Նորք	92300-327800	133500	169000
Ավան	99100-226300	121700	153900
Էրեբունի	103800-293400	117400	152000
Շենգավիթ	105100-399400	142000	180500
Դավթաշեն	118000-282100	145300	186900
Աջափնյակ	103800-451100	137000	169900
Մալաթիա-Սեբաստիա	90300-271900	133100	165300
Նուբարաշեն	57400-137500	67500	107100
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>57400-900000</b>	<b>150600</b>	<b>194400</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 29.1%:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 5082 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10.2%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 95000	44300	63900
	Ապարան	18000 - 30000	20700	25600
	Թալին	13600 - 34800	19300	24800
Արարատ	Արտաշատ	39100 - 137800	34900	49800
	Մասիս	36000 - 96100	42000	59000
	Վեդի	22600 - 65300	25700	40500
	Արարատ	19300 - 75100	28800	41700
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 159100	67100	84800
	Արմավիր	38700 - 125200	40100	56000
	Մեծամոր	33000 - 67600	21100	36300
Գեղարքունիք	Սևան	28300 - 88200	24300	36700
	Գավառ	20400 - 40000	19100	25800
	Մարտունի	22500 - 67500	26600	38800
	Վարդենիս	13500 - 30000	13700	20700
	Ճամբարակ	5900 - 31100	9500	12900
Լոռի	Վանաձոր	27000 - 115200	36400	49700
	Ստեփանավան	15000 - 35000	20500	24800
	Սյիստակ	30300 - 57300	24100	34300
	Ալավերդի	9600 - 30000	15600	20600
	Տաշիր	11300 - 33300	17300	20200
	Թումանյան	4100 - 11300	5200	5300
	Շամլուղ	2300 - 8300	2800	2800
	Ախթալա	6800 - 16000	10400	10500
Կոտայք	Աբովյան	55000 - 184700	67800	96000
	Նոր Հաճն	53100 - 101000	47900	65300
	Բյուրեղավան	22700 - 79800	31200	45800
	Եղվարդ	50200 - 88200	39500	60000
	Հրազդան	20900 - 73400	26600	37100
	Ծաղկաձոր	68000 - 90000	51200	71900
	Չարենցավան	26300 - 78400	29500	41900
Շիրակ	Գյումրի	25100 - 127100	39300	49400
	Արթիկ	19600 - 61500	20900	31000
	Մարալիկ	8400 - 30000	17700	21800
Սյունիք	Գորիս	26800 - 79300	34500	51400
	Կապան	29000 - 91400	25900	43300
	Սիսիան	26700 - 62700	23600	36000
	Մեղրի	20000 - 43300	18500	28400
	Ագարակ	9000 - 31100	15500	19800
	Քաջարան	20200 - 45600	13600	25300
	Դաստակերտ	4500 - 11300	6400	6500
Վայոց Ձոր	Վայք	20900 - 58000	24800	37600

	Եղեգնաձոր	33800 - 117000	35700	54900
	Ջերմուկ	43600 - 189200	39000	63500
Տավուշ	Դիլիջան	28100 - 95800	28700	44500
	Իջևան	40600 - 99900	33500	53600
	Բերդ	22100 - 70600	23000	29200
	Նոյեմբերյան	8500 - 30000	13400	18400
	Այրում	12000 - 22000	10000	18000

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 42.6%:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4944 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1156, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3788: 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 8.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է՝ 3.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 12.6%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2006թ.
Կենտրոն	135000-900200	303100.0	383900.0
Արաբկիր	90000-450100	241900.0	301300.0
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	145700.0	185300.0
Նորք-Մարաշ	90000-450100	174600.0	187300.0
Ավան	90000-360100	125500.0	156400.0
Էրեբունի	67500-225100	120700.0	154900.0
Շենգավիթ	67500-202500	144500.0	182700.0
Դավթաշեն	90000-405100	149400.0	189100.0
Աջափնյակ	67500-270100	141300.0	172200.0
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	136200.0	167900.0
Նուբարաշեն	40500-155000	71300.0	109100.0
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>40500-900200</b>	<b>159500.0</b>	<b>199100.0</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 24.8%:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	29100-98000	46900.0	66200.0
	Այսարան	13500-36000	21800.0	27100.0
	Թալին	13600-36000	20600.0	26000.0
Արարատ	Արտաշատ	22500-141000	35900.0	51100.0
	Մասիս	25000-98000	43100.0	60100.0
	Վեդի	22500-67500	27700.0	41800.0
	Արարատ	22500-76800	30000.0	42900.0
Արմավիր	Վաղարշապատ	54100-164200	68200.0	86100.0
	Արմավիր	22500-126000	41300.0	57100.0
Գեղարքունիք	Սևան	18000-90600	26400.0	40400.0
	Գավառ	10000-37800	20800.0	27100.0
	Մարտունի	22200-68000	28500.0	40100.0
	Վարդենիս	11000-32500	15700.0	22200.0
	Ճամբարակ	4500-32600	11100.0	14400.0
Լոռի	Վանաձոր	23200-116800	37700.0	51100.0
	Ստեփանավան	13500-40200	26000.0	27200.0
	Սպիտակ	20000-58600	25200.0	35600.0
	Ալավերդի	9000-31500	16800.0	21900.0
	Տաշիր	9000-36500	18600.0	21600.0
	Թումանյան	4500-18000	6400.0	6900.0
	Շամլուղ	2300-13500	4000.0	4300.0
	Ախթալա	9000-22500	11500.0	12000.0
Կոտայք	Արովյան	45500-191600	69700.0	97700.0
	Նոր Հաճն	42500-105800	49300.0	66500.0
	Բյուրեղավան	22200-81400	32200.0	46900.0
	Եղվարդ	30200-90300	41100.0	61100.0
	Հրազդան	18000-74000	28600.0	38300.0
	Օաղկաձոր	40000-112500	53800.0	73700.0
	Չարենցավան	18000-79300	31500.0	43100.0
Շիրակ	Գյումրի	28200-129000	43300.0	50900.0
	Արթիկ	13300-62400	22400.0	32200.0
	Մարալիկ	13500-40000	19000.0	23600.0
Սյունիք	Գորիս	18000-79900	35400.0	52700.0

	Կապան	22000-94000	27400.0	44300.0
	Միսիան	20000-66400	24500.0	37200.0
	Մեղրի	13500-44800	19800.0	29600.0
	Ագարակ	13300-36000	17100.0	21300.0
	Դաստակերտ	4500-18000	8000.0	8700.0
Վայոց Ձոր	Վայք	26000-60000	26000.0	38800.0
	Եղեգնաձոր	22200-118400	37300.0	56300.0
	Ջերմուկ	26500-191600	27100.0	36400.0
Տավուշ	Դիլիջան	26600-97500	31800.0	45500.0
	Իջևան	22200-101100	34600.0	54600.0
	Բերդ	20000-71200	23800.0	30400.0
	Նոյեմբերյան	9000-31500	14600.0	19400.0
	Այրում	5200-28000	10700.0	19200.0

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 38.0%:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 17205 միավոր /20551.12 հա/ հողեր, որից Երևանում` 1840 միավոր /532.75 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 1083 միավոր /470.37 հա/ հողեր, որից Երևանում` 688 միավոր /395.22 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 7852 միավոր /19206.16 հա/, որից Երևանում` 12 միավոր /1.24 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 6178 միավոր /592.93 հա/, որից Երևանում` 978 միավոր /100.57 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 2685 միավոր /410.45 հա/, որից Երևանում` 674 միավոր /215.01 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 341 միավոր /282.65 հա/, որից Երևանում` 176 միավոր /215.92 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր` 107 միավոր /38.02 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր` 40 միավոր /9.90 հա/: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- ջրային հողեր` 2 միավորի /11.00 հա/: Երևանում ջրային հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 16226 միավորի /20054.29 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 1750 միավոր /521.96 հա/, նվիրատվության գործարքներ` 846 միավոր /447.47 հա/, որից Երևանում` 64 միավոր /8.66 հա/ և փոխանակության գործարքներ` 133 միավոր /49.37 հա/, որից Երևանում` 26 միավոր /2.13 հա/:

Հանրապետությունում 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների

քանակական աճը կազմել է 36.6%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 11.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 59.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 7.1 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 12.0 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 40 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ 2 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 12230.31 հա, որից 12156.28 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 36.6%-ը կամ 5936 գործարքներ /10675.17 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 790 միավոր /406.03 հա/, իսկ 63.4%-ը կամ 10284 միավորը /9356.11 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 956 միավոր /115.16 հա/: 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 6 գործարք /23.00 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերի և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	167	210.01	174	28.73	449	167.29	12	1.24	7	5.48	731	66.56	206	41.87
Արագածոտն	428	1780.09	6	2.06	74	9.14	113	6.99	501	472.47	4	0.27	439	43.40	27	3.50
Արարատ	326	700.26	35	5.47	371	33.60	277	12.43	1041	598.20	6	0.99	753	67.95	22	2.50
Արմավիր	621	5955.09	16	6.10	28	2.63	188	3.54	1192	6201.19	2	2.24	625	55.59	72	3.93
Գեղարքունիք	15	15.63	3	0.61	73	7.26	163	11.72	145	157.48	1	0.20	114	14.57	20	5.47
Լոռի	12	14.55	7	2.74	23	1.00	100	24.27	398	270.85	2	0.30	81	9.14	45	0.96
Կոտայք	495	1097.03	43	33.84	273	26.18	295	48.88	1226	542.97	8	2.06	1483	150.71	55	19.71
Շիրակ	47	99.47	5	3.49	247	9.15	234	8.45	173	189.41	2	0.17	64	6.54	14	0.31
Սյունիք	3	2.28	13	4.02	9	0.82	119	5.18	175	210.20	2	0.30	26	2.48	22	0.76
Վայոց Ձոր	78	210.06	4	1.26	12	0.47	166	10.01	97	83.09	0	0.00	50	6.83	11	0.86
Տավուշ	53	47.95	5	0.50	28	2.60	46	13.67	292	95.75	1	0.12	80	7.06	2	0.29
Ընդամենը	2078	9922.41	304	270.10	1312	121.58	2150	312.43	5252	8822.85	35	12.13	4446	430.83	496	80.16

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերի:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	698	393.54	167	210.01	113	23.70	418	159.83	92	12.49	0	0.00	0	0.00	61	5.03	31	7.46
Արագածոտն	35	1.35	1	0.35	0	0.00	34	1.00	586	1796.94	428	1780.09	5	1.72	74	9.14	79	5.99
Արարատ	130	6.15	17	1.94	4	0.54	109	3.67	879	745.60	326	700.26	18	3.53	367	33.06	168	8.75
Արմավիր	16	3.17	2	2.88	1	0.05	13	0.24	829	5848.69	613	5839.59	14	3.22	27	2.58	175	3.30
Գեղարքունիք	19	2.17	2	0.41	2	0.16	15	1.60	235	33.06	15	15.63	1	0.20	71	7.10	148	10.13
Լոռի	49	16.44	5	1.66	5	0.12	39	14.66	93	26.13	12	14.55	2	1.08	18	0.89	61	9.61
Կոտայք	102	37.25	33	30.81	2	0.22	67	6.22	1002	1168.43	493	1096.80	10	3.02	271	25.95	228	42.66
Շիրակ	31	0.81	0	0.00	11	0.36	20	0.45	502	119.76	47	99.47	5	3.49	236	8.79	214	8.01
Սյունիք	60	6.08	9	3.33	3	0.34	48	2.41	84	6.22	3	2.28	4	0.69	6	0.48	71	2.77
Վայոց Ձոր	49	5.21	3	0.35	0	0.00	46	4.86	208	213.43	75	206.91	1	0.91	12	0.47	120	5.14
Տավուշ	62	8.84	5	0.50	20	1.92	37	6.42	70	55.89	53	47.95	0	0.00	8	0.69	9	7.25
Ընդամենը	1251	481.01	244	252.24	161	27.41	846	201.36	4580	10026.64	2065	9803.53	60	17.86	1151	94.18	1304	111.07

Հանրապետությունում 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 13 գործարքներ /118.88 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 53.7%: Ընդ որում Երևանում նվազել է 54.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 61.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 65.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 4.5 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.6 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 50 գործարքով, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 9 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ աճել է 2 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	341	731.87	4.4	6630.2	386.7	323	299.42	362.2	6772.5	2211.2
Ապարան	4	8.10	228.3	309.4	270.0	58	56.25	90.6	767.6	316.8
Թալին	83	1040.12	33.7	825.8	100.2	101	89.65	90.6	758.5	306.2
Ծաղկահովիտ						11	25.23	77.0	948.2	147.6



Արարատի մարզ										
Արտաշատ	126	168.41	10.0	5966.9	776.0	481	292.85	335.1	5418.0	1167.0
Մասիս	89	270.53	11.0	1533.3	456.5	209	138.22	181.1	6772.5	1536.2
Վեդի	111	261.31	20.3	2500.0	234.4	333	161.52	203.8	4515.0	954.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	106	460.27	2.3	3591.0	603.1	325	300.87	294.3	4063.5	759.9
Բաղրամյան	271	3834.68	6.3	837.4	86.6	289	4953.98	90.6	677.3	471.0
Վաղարշապատ	236	1544.64	2.3	1411.2	299.3	544	869.69	443.7	9030.0	1287.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						35	15.72	190.2	496.7	318.2
Ճամբարակ	14	14.43	75.0	1733.3	558.5	34	24.11	45.3	541.8	130.7
Մարտունի						21	7.68	45.3	1806.0	443.5
Սևան	1	1.20	219.3	219.3	219.3	5	3.46	45.3	451.5	179.0
Վարդենիս						47	104.56	27.2	532.8	196.9
Լոռու մարզ										
Այվերդի						254	128.05	163.0	2483.3	487.3
Գուգարք	4	1.70	362.5	377.9	368.3	25	18.27	226.4	2709.0	870.5
Սյիտակ	2	0.35	766.0	766.0	766.0	13	6.15	226.4	1490.0	477.6
Ստեփանավան	6	12.50	94.7	540.0	415.2	74	85.19	90.6	2257.5	321.6
Տաշիր						17	23.42	45.3	451.5	190.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	142	245.31	15.3	1172.5	298.4	510	157.97	271.7	11287.5	2890.0
Եղվարդ	175	518.48	13.3	12131.6	622.4	109	54.73	172.1	11287.5	2011.8
Հրազդան	176	333.01	45.2	4687.5	325.6	584	318.62	113.2	2709.0	709.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	42.15	50.0	498.8	289.6	70	75.29	249.0	1693.1	389.0
Ամասիա						17	31.30	36.2	237.0	96.9
Անի	21	47.97	85.5	282.2	165.7	35	34.78	108.7	361.2	198.3
Աշոցք						27	29.08	45.3	112.9	103.7
Արթիկ	19	9.35	43.0	888.9	330.4	24	18.95	63.4	1083.6	155.1
Սյունիքի մարզ										
Գորիս						58	90.25	90.6	673.3	297.2
Կապան	1	2.00	195.5	195.0	195.0	4	3.04	54.3	841.6	210.9
Մեղրի	2	0.28	800.0	809.5	804.8	22	4.44	181.1	1784.2	414.3
Սիսիան						91	112.47	45.3	631.2	174.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	46	194.56	35.9	1269.5	156.6	64	51.33	117.7	2524.8	1192.4
Վայք	29	12.35	35.9	1850.0	206.9	31	31.04	54.3	1430.7	466.2
Տավուշի մարզ										
Բերդ						107	27.69	45.3	841.6	314.4
Իջևան	44	9.41	81.3	1601.9	420.7	18	3.35	240.0	1683.2	758.3
Նոյեմբերյան	9	38.54	207.0	1315.0	678.9	167	64.71	45.3	3509.5	436.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Սրբավորների ամսական	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների ամսական	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	70	85849.0	73.3	2375.4	281.9	414	400597.5	113.2	3612.0	2002.1
Ապարան						12	18497.0	113.2	632.1	164.2
Թալին	4	5524.0	116.7	200.9	145.1	8	10136.0	45.3	361.2	71.8
Ծաղկահովիտ						1	30.0	45.3	361.2	65.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	172	178232.0	115.3	1499.0	339.7	190	207826.0	135.8	2709.0	739.4
Մասիս	170	127351.0	188.1	1561.9	802.8	397	305199.0	135.8	9030.0	950.8
Վեդի	25	25000.0	120.0	407.0	218.7	159	160130.0	113.2	993.3	539.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	12	12450.0	142.2	357.2	268.1	155	148066.0	135.8	2257.5	904.9
Բաղրամյան						7	8520.0	81.5	270.9	110.8
Վաղարշապատ	15	13300.0	631.0	812.5	695.9	456	392536.0	135.8	4515.0	1231.6
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	38	39400.0	88.0	1749.6	202.7	16	21696.0	135.8	903.0	309.5
Ճամբարակ	28	36000.0	47.5	145.2	114.2	15	18740.0	45.3	135.5	76.9
Մարտունի						53	62305.0	90.6	451.5	178.8
Սևան	5	5600.0	340.9	684.2	566.8	5	6810.0	90.6	903.0	120.5
Վարդենիս						25	36113.0	45.3	225.8	83.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						9	13380.0	67.9	270.9	97.9
Գուգարք	4	2683.0	68.5	1725.0	924.4	33	26712.0	67.9	2347.8	496.4
Սպիտակ	5	3290.0	76.6	222.1	105.7	16	19600.0	63.4	451.5	102.2
Ստեփանավան	9	2904.0	74.0	277.3	241.6	20	27311.0	45.3	270.9	82.0
Տաշիր						2	3326.0	45.3	135.5	62.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	135	125055.0	276.0	4523.5	1488.4	693	692198.0	135.8	6772.5	1474.1
Եղվարդ	96	96134.0	162.0	2374.9	1145.7	697	717359.0	135.8	6772.5	1623.7
Հրազդան	40	38235.0	74.5	1490.0	336.9	90	94343.0	135.8	9030.0	1042.4
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	150	41260.1	277.2	26677.4	1671.1	30	24938.2	113.2	1535.1	274.5
Ամասիա						2	3371.0	45.3	135.5	63.2
Անի	1	800.0	40.6	40.6	40.6	9	9563.7	67.9	180.6	86.2
Աշոցք						3	6570.0	40.8	135.5	55.5
Արթիկ	85	45884.8	42.0	2222.2	355.3	20	20931.5	67.9	925.6	126.6
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	2	800.0	905.0	912.5	908.8	12	10725.0	67.9	541.8	207.1
Կապան	4	4000.0	34.0	1666.9	691.4	1	300.0	67.9	632.1	189.2
Մեղրի						6	3550.0	67.9	406.4	106.2
Սիսիան						7	10210.0	67.9	406.4	120.8
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	12	4700.0	290.7	691.2	668.2	44	59562.0	67.9	1128.8	227.3
Վայք						5	6940.0	77.0	632.1	104.6
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	1320.0	45.3	632.1	79.0
Իջևան	7	5976.0	94.7	289.8	216.7	69	61230.0	67.9	1354.5	330.0
Նոյեմբերյան	1	900.0	291.2	291.2	291.2	8	7305.0	45.3	632.1	103.2

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 19 գործարքներ 4.17 հա մակերեսով, ընդ որում 11-ը՝ Արարատի /2.43 հա/, 3-ը՝ Գեղարքունիքի /1.06 հա/, 2-ը՝ Լոռու /0.18 հա/ և 3-ը՝ Տավուշի /0.50 հա/ մարզերում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7554 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 44.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 31.6%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 559 բնակարանների, 279 անհատական բնակելի տների, 2660 հասարակական, 408 արտադրական նշանակության օբյեկտների, 3594 միավոր /34659.93 հա/ հողերի, 50 ավտոտնակների և 4 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 247 վարձակալության գործարքների քանակները 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 36.0%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 34659.93 հա հողերից 41.10 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 34618.83 հա հողերի 81.7%-ը կամ 28269.34 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության, 79.20 հա՝ բնակավայրերի, 22.22 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 14.65 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 149.57 հա՝ անտառային, 661.90 հա՝ ընդերքօգտագործման, 5.45 հա՝ ջրային, 5416.21 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 0.30 հա՝ տրանսպորտի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 6510.67 հա, որից 6244.66 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 17867.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	26	2362.00	343	1680.24
Արարատ	11	1028.17	147	917.02
Արմավիր	1	5.00	104	997.65
Գեղարքունիք	50	2954.76	262	1757.22
Լոռի	8	1630.00	431	1476.35
Կոտայք	9	838.00	224	987.78
Շիրակ	19	4874.00	449	1370.66
Սյունիք	33	3840.00	116	916.15
Վայոց Ձոր	20	295.80	58	232.74
Տավուշ	2	40.00	34	65.81
<b>Ընդամենը</b>	<b>179</b>	<b>17867.73</b>	<b>2168</b>	<b>10401.62</b>

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11998 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 40.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.4%/, առանձնատների /19.5%/ և հողերի /11.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6047 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 40.0%-ով:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 3858.12 հա մակերեսով հողեր, որից 27.27 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 96.5% կամ 3723.34 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 2194.50 հա, որից 2192.63 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 140 և 176 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 12.1%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում /32.6%:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի նվազման միտում:

2006թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 18605 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 3.7%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /38.7%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***